Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիա

ՈՐՈՇՈՒՄ

17 սեպտեմբերի 2014 թվականի թիվ 12/16

քաղ. Մինսկ

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 2014 թվականի հունիսի 11-ի թիվ 11/21 «Նույնականացման միջոցներ դնելու մասին» որոշման կատարման ընթացքի մասին

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիան

ՈՐՈՇԵՑ՝

1. Ի գիտություն ընդունել նույնականացման միջոցները դնելու մասին հարցի մշակման մասով անցկացվող աշխատանքի մասին Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի կողմից ներկայացվող տեղեկատվությունը:

2. Կողմերին՝ շարունակել ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցների բեռնախցերի վրա նույնականացման միջոցների դնելն ապահովելու մասին որոշակի պետությունների հետ միջազգային երկկողմ պայմանագրեր կնքելու մասով հարցի մշակումը:

3. Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին, Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին, Ռուսաստանի ԴՄԾ-ին՝ 2015 թվականի երկրորդ եռամսյակում միմյանց տեղեկացնել սույն Որոշման 2-րդ կետում նշված

աշխատանքի արդյունքների մասին:

4. Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին, Ռուսաստանի ԴՄԾ-ին, Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին՝ մինչեւ սույն Որոշման 2-րդ կետում նշված պայմանավորվածություններն իրագործելը, «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների փոխադրման ընթացքում դրանք տրանսպորտային միջոցի բեռնասրահներից հանելու (կամ դրանց մեջ դնելու) հնարավորությունը բացառելու նպատակով՝ ՄՄ ՄՕ-ի 221-րդ հոդվածի դրույթների պահպանմամբ ապահովել՝ առանց մաքսային նույնականացման միջոցները բացելու կամ վնասելու տեսանելի հետքեր թողնելու տրանսպորտային միջոցի բեռնասրահներից ապրանքները հանելու (կամ դրանց մեջ դնելու) հնարավորությունը բացառող՝ ՄՄ ՄՕ-ի 109-րդ հոդվածով նախատեսված՝ ապրանքների նույնականացման եղանակի կիրառումը՝ անկախ մաքսային հսկողության ձեւերի կիրառումից:

Նախագահ՝ Ա. Յու. Բելյանինով

Նախագահի տեղակալ՝ Ա.Ֆ. Շպիլեւսկի

Նախագահի տեղակալ՝ Գ.Կ. Ամրին